

ԱՇՈՏ ՏԻԳՐԱՆԻ ՎԱՀՐԱՄՅԱՆ

Սովետական քիմիան ծանր կորուստ կրեց. հոկտեմբերի 8-ին 65 տարեկան հասակում վախճանվեց պրոֆեսոր, տեխնիկական գիտությունների դոկտոր, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ֆիզիկական քիմիայի ինստիտուտի մետաղների էլեկտրանստեցման լաբորատորիայի ղեկավար, ՌՍՖՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր Աշոտ Տիգրանի Վահրամյանը:



Մետաղների էլեկտրանստեցման հայրենական գիտության հիմնադիրներից մեկի, այդ բնագավառի խոշոր գիտնական Ա. Տ. Վահրամյանի անունը լայն ճանաչում է գտել ոչ միայն Սովետական Միությունում, այլև արտասահմանում: Նա մեծ ավանդ է մուծել մետաղների էլեկտրանստեցման տեսության զարգացման և այդ պրոցեսների հետազոտման նոր մեթոդներ մշակելու գործի մեջ:

Ա. Տ. Վահրամյանը ծնվել է 1908 թ. մարտի 23-ին Կաղզվանում: Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստանալով Երևանում և որոշ ժամանակ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում որպես ֆիզիկական քիմիայի ամբիոնի ասիստենտ աշխատելուց հետո նա ընդունվել ու հաջողությամբ ավարտել է ՍՍՀՄ ԳԱ ասպիրանտուրան, ապա դոկտորանտուրան և իր հետագա գիտական գործունեությունը մինչև կյանքի վերջը անց է կացրել ՍՍՀՄ այդ

գիտական պիսավոր կենտրոնում, ղեկավարելով էլեկտրաքիմիայով, որով ըսկրսել էր զբաղվել դեռևս Նրեանում, տպագրելով իր առաջին գիտական աշխատությունները:

Ա. Տ. Վահրամյանի ղեկավարությամբ կատարված հետազոտություններն աչքի են ընկնում տեսական և գործնական կարևոր խնդիրներ լուծելու հետ կապված բազմազան և մեծ թվով հարցերի ընդգրկմամբ և հետազոտությունների նոր մեթոդներ զարգացնելու ձգտումով: Պինդ էլեկտրոդի մակերևույթի վիճակը և էլեկտրալիզի պրոցեսում տեղի ունեցող նրա սնունդհատ փոփոխվելը անհրաժեշտորեն հաշվի առնելու մասին Վահրամյանի ցուցմունքի հիման վրա ստեղծվեց բեռացման կորեր դուրս բերելու գալվանականություն-կական մեթոդ, որի հիտադա զարգացումն ու տարածումը հանգեցրեց նաև մետաղների էլեկտրանստեցման պրոցեսների վրա մակերեսով ակտիվ նյութի աղեցությունն ուսումնասիրելու նկատմամբ նոր մոտեցման:

Վահրամյանն առաջարկել է մետաղների էլեկտրանստեցման պայմաններում ակտիվ մակերեսի մեծությունը որոշելու նոր, այլ եղանակների համեմատությամբ մի շարք էական առավելություններ ունեցող մեթոդ, որը գտել է իր բազմաթիվ հետևորդներին:

Առանձնապես հետաքրքիր են էլեկտրաքիմիական բարդ պրոցեսներից մեկի՝ քրոմաթիվի լուծույթներից քրոմը նստեցնելու հետազոտությանը նվիրված աշխատանքները, որոնցում զարգացված են այդ պրոցեսի մեխանիզմի և նրանում անօրգանական հավելցուքների դերի մասին օրիգինալ պատկերացումներ, որոնք հնարավորություն տվեցին հիմնավորելու քրոմի և այլ մետաղների էլեկտրանստեցման պայմանները և հաստատվեցին գործնականում:

Վահրամյանի ղեկավարությամբ մշակվել է ջրային լուծույթներից մետաղների էլեկտրանստեցման պրոցեսների ուսումնասիրման բարձր ջերմաստիճանային մեթոդը, որը հնարավորություն է տվել նոր ձևով բացահայտելու երկաթի խմբի մետաղների էլեկտրաքիմիական առանձնահատկությունները: Առաջին անգամը լինելով, ջրային լուծույթներում նիկելի, կոբալտի և երկաթի հավասարակշռված պոտենցիալների փորձնական չափումները հնարավորություն տվեցին որոշելու այդ մետաղների էլեկտրաքիմիական նստեցման և լուծվելու կինետիկական պարամետրերը, ինչպես նաև համապատասխան էլեկտրոդային ռեակցիաների արագությունների հաշտատունները, իսկ 100°-ից ավելի բարձր ջերմաստիճաններում երկաթի խմբի մետաղների էլեկտրաբույրեղացման պրոցեսի ուսումնասիրությունը նպաստեց ջրային լուծույթներից երկաթի մոնոբյուրեղ ստանալու օրիգինալ մեթոդ ստեղծելուն:

Վահրամյանն աչքի էր ընկնում հետազոտությունների նոր մեթոդներ զարգացնելու ձգտումով, նա մշակել է մի շարք օրիգինալ սարքեր մետաղների էլեկտրանստեցման պրոցեսները և էլեկտրալիզային նստվածքների ուսումնասիրության համար: Այս թնագավառում կատարված աշխատանքներից հարկ է առանձնապես հիշատակել անմիջականորեն էլեկտրալիզի պրոցեսում փայլուն էլեկտրալիզային ծածկույթների գոյանալու պրոցեսներն ուսումնասիրելու համար: Այդ սարքը ցուցադրվել է ՍՍՀՄ և արտասահմանյան ցուցահանդեսներում և արժանացել է բարձր գնահատականի, իսկ ԱՄՆ-ում՝ ոսկե մեդալի: Վահրամյանը հեղինակ է շուրջ 250 գիտական աշխատանքների, տասնյակ հեղինակային իրավունքների, ինչպես նաև մեկ տասնյակ կարևոր մենագրությունների, որոնցում ընդհանրացված են իր և իր աշխատակիցների



աշխատանքների արդյունքները զանազան մետաղների էլեկտրանստեցման տեսության ու տեխնոլոգիայի և այդ պրոցեսների հետազոտության մեթոդների վերաբերյալ, նրա հրատարակած գրքերից շատերը թարգմանվել են օտար լեզուներով ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, ԳԴՀ-ում, Չեխոսլովակիայում, Շվեյցարիայում:

Վահրամյանը մշտապես և սիրով ուշադրություն էր հատկացնում երիտասարդ որակյալ կադրեր, այդ թվում նաև աղգային հանրապետությունների երիտասրդներից, դաստիարակելու գործին, նրանց պատվաստելով գիտության նկատմամբ իրեն հատուկ իսկական սեր և իրենց նկատմամբ մեծ պահանջ-կոտություն:

Վահրամյանն աչքի էր ընկնում բացառիկ աշխատասիրությամբ, աշխատունակությամբ, բարյացակամությամբ և իր օգնության կամ խորհուրդների կարիքն զգացողներին օգնելու պատրաստակամությամբ: Նա ակտիվորեն մասնակցում էր մի շարք գիտական խորհուրդների, կենտրոնական ամսագրերի խմբագրական կոլեգիաների և գիտական ընկերությունների աշխատանքներին, երկար տարիներ ՄՍՀՄ բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի անդամ էր:

Նրա աշխատանքը բարձր է գնահատված կուսակցության և կառավարության կողմից՝ նրան պետական մրցանակ շնորհելով և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով ու մի քանի մեդալներով պարգևատրելով:

Վաղաժամ մահը կտրեց Ա. Տ. Վահրամյանի կյանքի թելը նրա ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում:

Ջերմ հայրենասերի, գիտության անխոնջ մշակի, օրինակելի կոմունիստի բյուրեղի պես մաքուր քաղաքացու, կյանքում բացառիկ համեստ, շրջապատի հետ վարվեցողության մեջ պարզ ու հասարակ և նվիրված ընկերոջ պայծառ հիշատակը ընդմիշտ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտում: